ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
8

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Ստեփանյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
kh.stepanyan@gmail.com

Լուսինե Մարտիրոսյան
Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
martirosyanlusine-4@aspu.am

1920Թ. ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր. Հայաստանի Առաջին Հանրապետություն, Անկախության փոխառություն, ՀՀ լիազոր-պատվիրակություն, Ոսկու ֆոնդ, միջկուսակցական խորհուրդ, տնտեսական անկախություն:

1920 թ. մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ուշադրությունն առավել սևեռեց երկրի սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Արդեն 1920 թ. հունիսի 1-ին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Աբրահամ Գյուլխանդանյանը Բյուրո-կառավարությանը ներկայացրեց առկա տնտեսական վիճակը բարելավելու և այդ նպատակով դեպի արտասահման արշավ կազմակերպելու օրինագծի նախագիծ, որը հայտնի դարձավ «Անկախության փոխառություն» անվամբ: Օրինագծի վերջնական տարբերակն ընդունվեց երկրի խորհրդարանի կողմից 1920 թ. հունիսի 5-ին (ՀՅԴ ԿԱ, փաստաթուղթ 10/10-259): Այս օրենքը նպատակ էր հետապնդում վերաշինել երկրի արտադրական ներուժը՝ հնարավորինս զարկ տալով արդյունաբերության զարգացմանը և ապահովել այդ նպատակին ծառայող թղթադրամի ներհոսքը:

Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը 1920 թ. հունիսի 10-ին հաստատեց նախապես Խորհրդարանի կողմից ընդունված Հայաստանի անկախության փոխառության մասին օրենքի նախագիծը (ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.118, թ.119): Օրենքը նախատեսում էր նորանկախ պետության արդյունաբերական ուժերը և տնտեսությունը վերականգնելու և հանրապետության թղթադրամի ֆոնդն ապահովելու նպատակով կազմակերպել հանգանակություն (Վրացյան 1993, 448): Ըստ օրենքի՝ նախատեսվում էր կնքել 20 մլն. ամերիկյան դոլարի անվանական գումարի պետական փոխառություն 6 տոկոսով: Փոխառության 75 տոկոսը հատկացվելու էր վերոհիշյալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրվելու էր պետական այլ կարիքների համար: Փոխառությունն արվելու էր 10 տարով Հայաստանում և արտասահմանում: Բաց էին թողնվելու 10, 25, 50, 100, 500 և 1000 դոլարանոց պարտաթղթեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից: Փոխառությունն ապահովագրվում էր Հայաստանի Հանրապետության ամբողջ գույքով: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոխառության կտրոններն ազատվում էին ցան-

կացած տեսակի հարկերից և տուրքերից (ՀՅԴ ԿԱ, փաստաթուղթ 10/10-259):

Փոխառության գործի կազմակերպումը վստահվեց նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին, ով այդ առաքելությամբ գործուղվեց արտասահման: Դաշնակցական Ա. Խատիսյանի թեկնածությունը անվարան պաշտպանեցին նաև մի շարք կուսակցություններ, չնայած այն հանգամանքին, որ նրանք հակասություններ ունեին կառավարող Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության հետ: Հայ Ժողովրդական կուսակցությունը, Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատ բանվորական կուսակցությունը, Հայ Ռամկավար կուսակցությունը, ինչպես նաև Անկուսակցականների միությունը, գտնելով, որ Հայաստանի անկախության փոխառությունը միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական և տնտեսական բարելավման համար, ամեն կերպ պաշտպանեցին կառավարությանը այդ փոխառության իրականացման գործում և դիմեցին համայն հայությանը՝ առաջարկելով եռանդուն մասնակցություն ցույց տալ նրա տարածմանը: Այսպիսով, հարկ է արձանագրել հայ ազգային կուսակցությունների միահամուռ ոգևորությունն ու աջակցությունը պետականամետ ծրագրի իրականացմանը: Փաստացի, մի կողմ դնելով իրենց միջև առկա թե՛ ծրագրային-մարտավարական, թե՛ քաղաքական տարակարծությունները և հայացքները, հայկական կուսակցությունները փորձ արեցին մեկտեղել իրենց մտավոր, նյութական միջոցները, իրենց առաջ ունենալով միայն մի վեհ նպատակ՝ փրկել և շենացնել Հայոց նորաստեղծ հանրապետությունը: Բոլորը քաջ գիտակցում էին, որ «Անկախության փոխառության» հաջողությունը Հայաստանի տնտեսական անկախության միակ երաշխիքն էր լինելու (Վրացյան 1993, 643):

Անկախության փոխառության գաղափարը մեծ ոգևորություն առաջացրեց թե՛ Հայաստանում, և թե՛ արտասահմանում: Աշխարհի տարբեր անկյուններից շատերն էին ցանկանում իրենց մասնակցությունն ունենալ պետության վերաշինման գործում: Հասարակական-քաղաքական տարբեր շրջանակներ, թերթեր, անհատ գործիչներ կանգնեցին ՀՀ կառավարության կողքին: Բոլորը համոզված էին, որ փոխառությունը ցանկալի արդյունք կունենա: Առանց չափազանցության՝ հստակորեն կարող ենք արձանագրել, որ նորաստեղծ պետության հզորացման, բարգավաճման գործին լծվել էր ողջ հայությունը՝ անկախ սոցիալական վիճակից, անկախ քաղաքական համոզմունքներից և այլ հանգամանքներից:

Հրատարակվեց «Անկախության փոխառություն» միօրյա թերթ, որտեղ գրառումներով հանդես եկան բազմաթիվ մեծանուն գործիչներ. Հովհաննես Թումանյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Լիսիցյանը, Ռուբեն Խանազատը և ուրիշներ (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 588, թ. 185–188): Հենց օգոստոսի 1-ին բազմաթիվ անհատներ, հիմնարկություններ, խորհրդարանի և կառավարության անդամներ տրամադրում են զգալի գումարներ («Յառաջ», 1920, 1 օգոստոսի): Կաթողիկոսը Էջմիածնի կողմից տալիս է 1 մլն. ռուբլի և իր հայրապետական կոնդակով դիմում է թե՛ Մայր Հայաստանի, թե՛ աշխարհասփյուռ հայությանը՝ խնդրելով աջակցել Մայր Հայրենիքի վերականգնման և բարգավաճման ծրագրին («Յառաջ», 1920, 8 օգոստոսի): Մի քանի ժամվա ընթացքում հավաքվում է 45 մլն. ռուբլի (Հովհաննիսյան 2015, 34):

Հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ նույն ոգևորությամբ փոխառությանը իրենց նպաստն են բերում նաև գավառաբնակները: Բավական է նշել, որ Արդա-

հանի մահմեդականությունը փոխառության ծրագրին տվեց շուրջ 50 միլիոն ռուբլի, որը սեպտեմբերի 5-ին անձամբ իր ձեռքով գավառապետ Կադիմովը հանձնեց Կարսի պետական գանձարանին: Հայաստանում փոխառությանը մասնակցության թիվը անցել էր այլևս սահմանված չափերից, և այդ իսկ պատճառով էլ կառավարությունը ստիպված էր սեպտեմբերի 5-ին դադարեցնել բաժանորդագրությունը Հայաստանի սահմաններից ներս: Այսպես, Բաքվի հայտնի դրամատեր Արշակ Ղուկասյանի թողած կտակով 8 միլիոն ռուբլի փոխանցվեց Հայաստանին, Գալուստ Գյուլբեկյանը խոստացել էր Հայաստանում կառուցել մի շարք պետական շենքեր, Հ. Մելիքյանը պատրաստվում էր Երևանում կառուցել Ժողովրդական տուն: Կ. Պոլսի «Ժողովրդի ձայն» թերթը օգոստոսի 20-ի համարում հաղորդում էր, որ Հայ Ռամկավար կուսակցությունը Եգիպտոսում որոշել էր Հայաստանին տրամադրել 50 օդանավ («Ժողովրդի ձայն» 1920, 20 օգոստոսի):

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը Ամերիկայում բանակի համար կազմակերպում է հանգանակություն, որի արդյունքում ավելի քան կես միլիոն է հավաքվում, ինչպես նաև բանակի համար Երևան է ուղարկվում մեծ քանակությամբ պահածո, ՀՀ համալսարանին և Հանրային գրադարանին են նվիրվում մեծարժեք գրադարաններ: Անչափ կարևոր գործունեություն է ծավալում «Մայիլյան եղբայրների գիտական արշավախումբը», որը մասնագիտական շրջանակների միջոցով, ուսումնասիրում էր Հայաստանի տնտեսական միջոցները և հարստությունները (Վրացյան 1993, 450–451):

«Անկախության փոխառության» ծրագրի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1920 թ. օգոստոսի 1-ին Թիֆլիսում:

Առանձնապես կարևոր էր Թիֆլիսի առաջին հանդիպումը: Թիֆլիսի առևտրականների բանկում Խատիսյանը դիմեց շուրջ 40 հարուստ գործարարների, այդ թվում՝ Արշակ և Եղիա Մայիլյաններին (Մայիլով), Միքայել Արամյանցին, Դավիթ Յուզբաշյանին, Խաչատուր Աֆրիկյանին, Բաղդասարյան և Սեյլանյան եղբայրներին, ովքեր իրենց աջակցությունը խոստացան ցուցաբերել Ա. Խատիսյանի գլխավորած պատվիրակությանը, ինչպես նաև վստահեցրեցին, որ հայկական դրամատները ձեռնպահ կմնան անկախության պարտատոմսերի վաճառքից վճարներ գանձելուց (Խատիսեան 1968, 225):

Հայ ունևոր դասը, Խատիսյանի հավաստմամբ սկսել էր արդեն «լիքիտասիօնի» ենթարկել իր ունեցվածքը և պատրաստվում էր ուղղվել դեպի Հայաստան: Հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ հայ հարուստ դասակարգը այդ քայլի համար ուներ իր օբյեկտիվ պատճառները, մասնավորապես վրաց կառավարությունը զանազան արհեստածին միջոցներով և օրենքներով ջանում էր խլել հայ հարուստների ունեցվածքը, կալվածքները, աղքատացնել նրանց և դրա շնորհիվ հարստացնել վրաց բուրժուազիային: Եվ հենց այս վտանգին դիմագրավելու համար է նաև,որ հայերը կազմել էին տարբեր միություններ օգնելու Հայաստանի կառավարությանը տնտեսական վերականգնման հարցում՝ քաջ գիտակցելով, որ այդ կառավարությունը միանգամայն զորավիգ պետք է լինի իրենց շահերի պաշտպանությանը («Հայրենիք» 1920, օգոստոսի 3):

Այսպես, Թիֆլիսի ամենալավ թատրոնը, «Արտիստական ընկերություն» անունով, շատ աննշան գումարով Յուզբաշյանների ձեռքից անցավ պետությանը:

Թիֆլիսի ամենալավ տունը, որը պատկանում էր Մ.Արամյանցին, դարձյալ անցավ վրացիների ձեռքը, ովքեր էլ այն վերածեցին «բանվորական տան»: Բացի այս, միևնույն ժամանակ քաղաքային վարչությունը բավականին մեծ առողջապահական տուրքեր սահմանեց հարուստ քաղաքացիների վրա, տուրքեր, որոնց վճարողները դարձյալ հայերն էին: Վրաց կառավարության որդեգրած նման գործելաոճը, ծանր տուրքերը և իհարկե միևնույն ժամանակ արթնացած ազգային գիտակցությունը հայ ունևոր դասին մղում էր դեպի Մայր Հայաստան: Իհարկե այս երևույթը, շատ ողջունելի էր, և ապագայում մեծ հաջողություններ էր խոստանում Հայաստանի տնտեսության զարգացման համար: «Անկախության փոխառությանը» Վրաստանի հայության ակտիվ մասնակցությանն էլ ավելի նպաստեց այն հանգամանքը, որ ֆինանսական հսկա Ա.Մելիք-Ազարյանն իր ճոխ առանձնատունը կտակեց Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաև ստավրոպոլցի առևտրական Մակար Պոպովն իր ողջ հարստությունը, որը կազմում էր մոտ 25 միլիոն ռուբլի, նվիրաբերեց Հայաստանի ազգային համալսարանին («Հայրենիք» 1920, 21 սեպտեմբերի):

Թիֆլիսի հայ ունևոր դասը, մասնավորապես՝ Մայիլյանները, որոշեցին հիմնել ապակու գործարան Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), Փիթոյանները՝ կաշվի գործարան Ձալալօղլիի (այժմ՝ Ստեփանավան) մոտ: Սկսվեցին ուսումնասիրություններ կատարվել շաքարի մշակության հնարավորության մասին Ալեքսանդրապոլի գավառում և ծխախոտագործության՝ Սուրմալուի և Էջմիածնի շրջաններում: Խատիսյանն անձամբ նշում է, որ ինքը Վրաստանում ամեն տեղ ունենում էր երեք տեսակի ժողով-հանդիպումներ՝ ա) բուրժուական դասի, բ) ժողովրդական զանգվածների, գ) մամուլի, տեղական-քաղաքական ու գիտական կազմակերպությունների, բժշկական, իրավաբանական, բարեգործական ընկերության համար (Խատիսեան 1968, 226):

Ա.Խատիսյանը Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին նշանակեց որպես Վրաստանում «Անկախության փոխառության» համակարգող և Ախալցխայի, Գորիի, Սիգնախի ու Վրաստանի այլ վայրերի հայ համայնքներից աջակցության հեռագրեր ստանալուց հետո Խատիսյանը ուղևորվեց դեպի Բաթում՝ նպատակ ունենալով այնուհետև նավով մեկնել Եվրոպա իր ստանձնած առաքելությանը ծնունդ տալու համար («Հայրենիք» 1920, 21 սեպտեմբերի):

Իհարկե, միանգամայն սպասելի էր նաև օդում կախված այնպիսի խոսակցությունների տարածումը, թե իբր Հայաստանի կառավարությունը վերոնշյալ փոխառությունը վերցնելուց հետո չի պատրաստվում այն ետ վերադարձնել: Նման հերյուրանքներ տարածելով՝ որոշ շրջանակներ նպատակ ունեին վիժեցնել Հայաստանի «Անկախության փոխառության» կյանքի կոչումը: Այս առթիվ շատ հանգամանալից բացատրություն է տալիս «Անկախության փոխառության» փոխնախագահ Գրիգոր Չալխուշյանը, ով այս ծրագրի քարոզարշավի առաջ տանող ոգին էր հանդիսանում («Յառաջ» 1920, 1 օգոստոսի):

Ինչպես նշեցինք, Ա.Խատիսյանը Թիֆլիսից մեկնեց Բաթում, ուր նրան դիմավորեցին Մեծ Բրիտանիայի զինվորական նահանգապետ Վ.Ջ.Ն.Կուկ-Կոլլինը, Բաթումի հայ հյուպատոս Մ.Աթաբեկյանը, տեղական գաղութի բազմաթիվ ներկայացուցիչներ, Հայ Ազգային խորհրդի նախագահ Աշոտ Մնդոյանցը: Բաթու-

մում Ա.Խատիսյանը նույնպես հանդիպեց այն ոգևորությանը և պատրաստակամությանը, ինչ տիրում էր Թիֆլիսում: Բաթումում պետականամետ այս վեհ գաղափարին իր մասնակցությունը ցուցաբերելու գեղեցիկ քայլ կատարեցին տեղի հայ կանայք: Բաթումի «Տիկնանց Կոմիտեի» անդամները առաջարկեցին Ա.Խատիսյանին կազմակերպել նաև ոսկու հանգանակություն Հայաստանի «Ոսկու ֆոնդ» ստեղծելու համար: Տեղում գործի առաջին քարը դնելու համար՝ սեղանի վրա դրեցին ոսկյա ժամացույց, մատանիներ, շղթաներ, ապարանջաներ և այլն (Խատիսեան 1968, 227): Եվ հենց այսպես էլ հիմք դրվեց «Ոսկու ֆոնդին», որը մեծ հաջողություն էր խոստանում Հայաստանի տնտեսական վերաշինման համար նաև Կ.Պոլսում, Իզմիրում, Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլուր, որտեղ հետո եղավ Ա.Խատիսյանի գլխավորած պատվիրակությունը:

Այսպիսով, Անկախության փոխառության մասին օրենքի կյանքի կոչմամբ Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասնել հանրապետության համընդհանուր ճանաչմանը, նպաստ բերել Հայկական հարցի լուծմանը, օտար պետությունների հետ հաստատել առևտրատնտեսական սերտ հարաբերություններ և որ ամենաառաջնային խնդիրն էր՝ ապահովել Հայաստանի Հանրապետության տնտեսական անկախությունն ու բարգավաճումը: Մի խոսքով, Հանրապետությունը դարձնել կենսունակ պետություն, որը կդառնար տարածաշրջանի հզոր երկրներից մեկը: Ցավալիորեն անավարտ մնաց հայրենանվեր այս առաքելությունը, որի շնորհիվ մեզ՝ սերունդներիս, մեկ անգամ ևս պատգամվեց երբեք չընկնել տերեր փնտրող այս կամ այն հոսանքների ազդեցության տակ, այլ սեփական ուժերով, սեփական միջոցներով կռել հայոց երկրի ապահովությունը և ոչ թե օտարին ապավինելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ 1920 – «Ժողովրդի ձայն», Կ.Պոլիս, 1920:

ԽԱՏԻՍԵԱՆ 1968 – Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, Համազգայինի տպարան, 1968, 225:

ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ:

ՀԱՅՐԵՆԻՔ 1920 – «Հայրենիք», Բոստոն, 1920:

ՀՅԴ ԿԱ – կենտրոնական արխիվ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2015 – Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ.III, Երևան, Տիգրան Մեծ, 2015:

ՅԱՌԱՋ 1920 – «Յառաջ», 1 թգոստոսի, Երևան, 1920:

ՎՐԱՑՅԱՆ 1993 –Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1993:

Khachatur Stepanyan
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
kh.stepanyan@gmail.com

Lusine Martirosyan
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
mkrtchyanasia-4@aspu.am

LAW ON THE LOAN OF INDEPENDENCE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 1920 AND THE STEPS COMING FROM THEM IN ARMENIA AND GEORGIA

Keywords. The First Republic of Armenia, Loan of Independence, Plenipotentiary Delegation of the Republic of Armenia, Gold Fund, Inter-Party Council, Economic Independence.

On June 10, 1920, the Government of the First Republic of Armenia approved the draft law "On the Loan of Armenia's Independence" previously adopted by the Parliament.The law envisaged organizing a fundraiser for the industrial forces of the newly independent state in order to restore the economy and provide the republic's banknote fund. The loan was to be made for 10 years in Armenia and abroad.The loan was insured with all the property of the Republic of Armenia.The idea of loan of independence aroused great enthusiasm both in Armenia and abroad.Many from all over the world wanted to be involved in rebuilding the state.The opening of the Independence Loan Program took place in Georgia and was quite promising.The opening of the Independence Loan Program took place in Georgia and was quite promising. Various socio-political circles, newspapers, and individual figures stood by the Armenian government. Everyone was convinced that the loan would have the desired effect.

Хачатур Степанян
д. и. н.
Армянский Государственный Педгогический Университет им. Абовяна
kh.stepanyan@gmail.com

Лусине Мартиросян
Армянский Государственный Педгогический Университет им. Абовяна
kh.stepanyan@gmail.com

ЗАКОН О ЗАЙМЕ НЕЗАВИСИМОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1920 Г. И ИСХОДЯЩИЕ ИЗ ЭТОГО ШАГИ В АРМЕНИИ И ГРУЗИИИ

Ключевые слова: Первая Республика Армения, Заем независимости, Полномочная делегация Республики Армения, Золотой фонд, Межпартийный совет, Экономическая независимость.

10 июня 1920 года правительство Первой Республики Армения одобрило ранее принятый парламентом законопроект «О займе независимости Армении».10 июня 1920 года правительство Первой Республики Армения одобрило ранее принятый парламентом законопроект «О займе независимости Армении». Закон предусматривал организацию сбора средств для промышленных сил нового независимого государства с целью восстановления экономики и обеспечения денежного фонда республики. Кредит должен был быть предоставлен сроком на 10 лет в Армении и за рубежом. Идея заимствования независимости вызвала большой энтузиазм как в Армении, так и за рубежом. Многие со всего мира хотели участвовать в восстановлении государства. Открытие программы состоялось в Грузии, и это было многообещающе. Правительство Армении поддержали различные общественно-политические круги, газеты и отдельные деятели. Все были уверены, что заем принесет желаемый результат.